# ԴԵՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ
# (ՆԵՐԴԻՐ-ԹԵՐԹԻԿ)
# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՌՈՂԻ ՀԱՄԱՐ

**Էմկոր 2,5**

**2,5 մգ թաղանթապատ դեղահատեր**

**Էմկոր 5**

**5 մգ թաղանթապատ դեղահատեր**

**Էմկոր 10**

**10 մգ թաղանթապատ դեղահատեր**

**Բիսոպրոլոլ**

**Ուշադիր կարդացեք ներդիր-թերթիկն ամբողջությամբ՝ նախքան դեղի ընդունումը, քանի որ այն պարունակում է կարևոր տեղեկատվություն:**

- Պահեք այս ներդիր-թերթիկը: Հնարավոր է այն կրկին կարդալու կարիք լինի:
- Եթե ունեք լրացուցիչ հարցեր, դիմեք բուժող բժշկին, դեղագետին կամ բուժքրոջը:
- Այս դեղը բժիշկը նշանակել է անձամբ Ձեզ: Չի կարելի այն փոխանցել այլ անձանց: Դեղը կարող է վնասել նրանց, եթե նույնիսկ հիվանդության ախտանիշները համընկնում են:
- Եթե ի հայտ է եկել որևէ կողմնակի ազդեցություն, այդ թվում՝ նաև այնպիսիները, որոնք թվարկված չեն այս ներդիր-թերթիկի «Ինչպիսի կողմնակի ազդեցություններ կարող են առաջանալ» 4-րդ բաժնում, ապա խորհրդակցեք բուժող բժշկի, դեղագետի կամ բուժքրոջ հետ:

**Ինչ բովանդակություն ունի այս ներդիր-թերթիկը**

1. Ինչ է Էմկոր դեղը և ինչի համար է այն կիրառվում:
2. Ինչ պետք է իմանալ Էմկոր դեղն ընդունելուց առաջ:
3. Ինչպես ընդունել Էմկոր դեղը:
4. Ինչպիսի կողմնակի ազդեցություններ կարող են առաջանալ:
5. Ինչպես պահել Էմկոր դեղը:
6. Ինչ է պարունակում փաթեթը և այլ տեղեկություններ:

## 1. ԻՆՉ Է ԷՄԿՈՐ ԴԵՂԸ ԵՎ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Է ԱՅՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ

Էմկոր դեղի ակտիվ բաղադրատարրը բիսոպրոլոլն է: Այն պատկանում է բետա պաշարիչներ կոչվող դեղերի շարքին: Նշված դեղերն ազդում են օրգանիզմի, հատկապես սրտի՝ նյարդային որոշ ազդակների նկատմամբ պատասխանի վրա: Արդյունքում բիսոպրոլոլը դանդաղեցնում է սրտամկանի կծկման հաճախականությունը և նպաստում է, որ սիրտն ավելի արդյունավետորեն օրգանիզմին արյուն մատակարարի: Բիսոպրոլոլը նաև նվազեցնում է թթվածնի նկատմամբ պահանջը և արյան հոսքը դեպի սիրտ: Սրտային անբավարարությունը զարգանում է, երբ սրտամկանը թույլ է և չի կարողանում օրգանիզմի պահանջներին համապատասխան քանակությամբ արյուն մատակարարել:

Էմկոր դեղը կիրառվում է՝

- բարձր զարկերակային ճնշման (զարկերակային գերճնշում),
- ստենոկարդիայի,
- կայուն քրոնիկական սրտային անբավարարության բուժման համար:

Կայուն քրոնիկական սրտային անբավարարության դեպքում Էմկորը կիրառվում է այս հիվանդության բուժման համար անհրաժեշտ այլ դեղերի հետ համակցված (օրինակ՝ անգիոտենզին փոխակերպող ֆերմենտի արգելակիչներ, միզամուղներ և սրտային գլիկոզիդներ):

## 2. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԷՄԿՈՐ ԴԵՂՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ

**Մի օգտագործեք Էմկոր դեղը**

Մի օգտագործեք Էմկոր դեղը, եթե ունեք հետևյալ հիվանդություններից որևէ մեկը՝

- ալերգիա դեղի ակտիվ բաղադրատարրի կամ օժանդակ նյութերից որևէ մեկի նկատմամբ (դրանք թվարկված են 6-րդ բաժնում),
- ծանր ընթացքով բրոնխային ասթմա կամ թոքերի ծանր ընթացքով քրոնիկական հիվանդություններ,
- վերջույթների արյան շրջանառության ծանր աստիճանի խանգարումներ (օրինակ՝ Ռեյնոյի համախտանիշ), որոնք կարող են առաջացնել ցավի զգացողություն ձեռքերի և ոտքերի մատներում, դրանց գունատություն կամ կապտություն,
- չբուժված ֆեոքրոմոցիտոմա, որը մակերիկամների հազվադեպ հանդիպող ուռուցք է,
- մետաբոլիկ ացիդոզ, որը արյան մեջ թթվի ավելցուկային պարունակությամբ պայմանավորված վիճակ է:

Մի օգտագործեք Էմկոր դեղը, եթե ունեք սրտի հետևյալ հիվանդություններից որևէ մեկը՝

- սրտային սուր անբավարարություն,

- սրտային անբավարարության վատթարացում, որի դեպքում պահանջվում է ներերակային ներարկել սրտամկանի կծկման ուժը մեծացնող դեղեր,
- ցածր զարկերակային ճնշում,
- սրտի որոշ հիվանդություններ, որոնք սրտի խթանիչի բացակայության պայմաններում հանգեցնում են սրտի կծկման շատ ցածր հաճախականությանը կամ սրտի անկանոն կծկումներին,
- կարդիոգեն շոկ, ինչը զարկերակային ցածր ճնշում և արյան անբավարար շրջանառություն առաջացնող սրտի սուր և լուրջ ախտահարում է:

**Կիրառման հատուկ հրահանգներ և նախազգուշացումներ**

Նախքան Էմկոր դեղի կիրառումը՝ խորհրդակցեք բուժող բժշկի կամ դեղագետի հետ: Ստորև նշված վիճակների առկայության դեպքում այդ մասին տեղեկացրեք բուժող բժշկին: Հնարավոր է նա կորոշի դրանց հատուկ ուշադրություն դարձնել (օրինակ՝ լրացուցիչ բուժման նշանակում կամ ստուգիչ չափումների ավելի հաճախակի իրականացում).

- շաքարային դիաբետ,
- խիստ սննդակարգ,
- սրտի որոշ հիվանդություններ, օրինակ՝ սրտի ռիթմի խանգարումներ կամ հանգստի վիճակում ուժեղ ցավ կրծքավանդակում (Պրինցմետալի ստենոկարդիա),
- երիկամների կամ լյարդի հիվանդություններ,
- վերջույթներում արյան շրջանառության ոչ շատ ծանր խանգարումներ,
- ոչ շատ ծանր ընթացքով բրոնխային ասթմա կամ թոքերի քրոնիկական հիվանդություններ,
- նախկինում (անամնեզում) մաշկի թեփուկանման ցան (պսորիազ),
- մակերիկամների ուռուցք (ֆեոքրոմոցիտոմա),
- վահանաձև գեղձի ֆունկցիայի խանգարում,
- սրտի առաջին աստիճանի պաշարում (վիճակ, որի դեպքում նյարդային ազդակների փոխանցումը դեպի սիրտ խանգարվում է, ինչի արդյունքում սրտի կծկումները պարբերաբար կարող են բացակայել կամ դառնալ անկանոն):

**Բացի այդ, տեղեկացրեք բուժող բժշկին, եթե պատրաստվում եք ընդունել՝**

- դեսենսիբիլիզացնող բուժում (օրինակ՝ պոլլինոզի կանխարգելման նպատակով), քանի որ Էմկորը կարող է մեծացնել ալերգիկ ռեակցիաների

զարգացման հավանականությունը, կամ այդ ռեակցիան կարող է ունենալ ավելի ծանր բնույթ,

- անզգայացում (օրինակ՝ վիրաբուժական միջամտությունների դեպքում), քանի որ Էմկոր դեղը կարող է ազդել այդ իրավիճակի հանդեպ Ձեր օրգանիզմի պատասխանի վրա:

**Երեխաներ և դեռահասներ**

Խորհուրդ չի տրվում Էմկոր դեղը կիրառել երեխաների և դեռահասների շրջանում:

**Էմկոր դեղի և այլ դեղերի միաժամանակյա կիրառում**

Տեղեկացրեք բժշկին կամ դեղագետին, եթե ընդունում եք, վերջերս ընդունել եք կամ պատրաստվում եք ընդունել որևէ այլ դեղ:

Առանց բուժող բժշկի խորհրդի՝ Էմկոր դեղահատերի հետ միաժամանակ մի ընդունեք հետևյալ դեղերը.

- սրտի անկանոն կամ անսովոր զարկերի բուժման համար կիրառվող որոշ դեղեր (առաջին դասի հակաառիթմիկ դեղեր, օրինակ՝ քվինիդին, դիզոպիրամիդ, լիդոկային, ֆենիտոին, ֆլեկաինիդ, պրոպաֆենոն),
- զարկերակային բարձր ճնշման, ստենոկարդիայի կամ սրտի անկանոն զարկերի բուժման համար կիրառվող որոշ դեղեր (կալցիումի անտագոնիստներ, օրինակ՝ վերապամիլ և դիլթիազեմ),
- զարկերակային բարձր ճնշման բուժման համար կիրառվող որոշ դեղեր, օրինակ՝ կլոնիդին, մեթիլդոպա, մոկսոնիդին, ռիլմենիդին: Սակայն առանց բուժող բժշկի հետ խորհրդակցելու՝ **մի դադարեցրեք նշված դեղերի ընդունումը:**

Նախքան ստորև նշված դեղերի հետ միաժամանակ Էմկորի ընդունումը՝ խորհրդակցեք բուժող բժշկի հետ: Հնարավոր է Ձեր բժշկին անհրաժեշտ լինի ավելի հաճախ վերահսկել Ձեր առողջական վիճակը:

- զարկերակային բարձր ճնշման, ստենոկարդիայի կամ սրտի անկանոն զարկերի բուժման համար կիրառվող որոշ դեղեր (դիհիդրոպիրիդինային շարքի կալցիումի անտագոնիստներ, օրինակ՝ նիֆեդիպին, ֆելոդիպին և ամլոդիպին),
- սրտի անկանոն կամ անսովոր զարկերի բուժման համար կիրառվող որոշ դեղեր (երրորդ դասի հակաառիթմիկ դեղեր, օրինակ՝ ամիոդարոն),
- տեղային կիրառման բետա պաշարիչներ (օրինակ՝ գլաուկոմայի բուժման համար կիրառվող թիմոլոլի ակնակաթիլներ)
- Ալցհեյմերի հիվանդության կամ գլաուկոմայի բուժման համար կիրառվող որոշ դեղեր (պարասիմպատոմիմետիկներ, օրինակ՝ տակրին կամ կարբախոլ) կամ

սրտի սուր ախտահարման բուժման համար կիրառվող դեղեր (սիմպատոմիմետիկներ, օրինակ՝ իզոպրենալին և դոբուտամին),

- հակաշաքարախտային դեղեր, այդ թվում՝ ինսուլին,
- ցավազրկողներ (օրինակ՝ վիրաբուժական միջամտությունների ժամանակ կիրառվող),
- մատնոցուկից պատրաստված դեղեր, որոնք կիրառվում են սրտային անբավարարության բուժման համար,
- ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղեր, որոնք կիրառվում են արթրիտի, ցավի կամ բորբոքման բուժման համար (օրինակ՝ իբուպրոֆեն կամ դիկլոֆենակ),
- զարկերակային ճնշումն իջեցնելու (որպես ցանկալի կամ անցանկալի ազդեցություն) հատկությամբ օժտված որևէ դեղ, օրինակ՝ հակագերճնշումային դեղեր, դեպրեսիայի բուժման համար կիրառվող որոշ դեղեր (եռցիկլիկ հակադեպրեսանտներ, օրինակ՝ իմիպրամին կամ ամիտրիպտիլին), էպիլեպսիայի բուժման համար կամ անզգայացման ընթացքում կիրառվող որոշ դեղեր (բարբիտուրատներ, օրինակ՝ ֆենոբարբիտալ) կամ իրականության ընկալման կորստով բնորոշվող հոգեկան հիվանդությունների բուժման համար կիրառվող որոշ դեղեր (ֆենոթիազիններ, օրինակ՝ լևոմեպրոմազին),
- մեֆլոքվին, որը կիրառվում է մալարիայի կանխարգելման կամ բուժման համար,
- մոնոամինոօքսիդազայի արգելակիչներ կոչվող դեղեր (բացառությամբ՝ մոնոամինոօքսիդազա B ֆերմենտի արգելակիչների), որոնք կիրառվում են դեպրեսիայի բուժման համար, օրինակ՝ մոկլոբեմիդ,
- մոքսիսիլիտ, որը կիրառվում է արյան շրջանառության խանգարումների, օրինակ՝ Ռեյնոյի համախտանիշի, բուժման համար:

**Կիրառումը հղիության և կրծքով կերակրման շրջանում**

***Հղիություն***

Հղիության ընթացքում Էմկոր դեղի կիրառման դեպքում առկա է երեխայի վրա դեղի բացասական ազդեցության ռիսկ: Եթե հղի եք կամ կրծքով կերակրում եք կամ ենթադրում եք, որ հղի եք կամ պլանավորում եք հղիություն, ապա Էմկոր դեղի ընդունումից առաջ խորհրդակցեք բժշկի կամ դեղագետի հետ: Նրանք կորոշեն արդյոք հղիության ընթացքում Դուք կարող եք ընդունել այս դեղը, թե ոչ:

***Կրծքով կերակրման շրջան***

Հայտնի չէ, թե արդյոք բիսոպրոլոլը ներթափանցում է կնոջ կրծքի կաթ, թե ոչ: Այդ պատճառով Էմկոր դեղով բուժման ընթացքում խորհուրդ չի տրվում կրծքով կերակրել:

**Ազդեցությունը ուշադրություն պահանջող գործողությունների վրա (փոխադրամիջոցների վարում, սարքավորումների հետ աշխատանք)**

Փոխադրամիջոցներ վարելու և մեխանիզմների հետ աշխատելու հնարավորությունը կախված է այն բանից, թե Դուք որքանով եք դեղը լավ տանում: Հատկապես ուշադիր եղեք բուժման սկզբում, դեղաչափի բարձրացման կամ դեղի փոխարինման, ինչպես նաև դեղի և ալկոհոլի միաժամանակյա ընդունման դեպքում:

**3.ԻՆՉՊԵՍ ԸՆԴՈՒՆԵԼ ԷՄԿՈՐ ԴԵՂԸ**

Դեղը միշտ անհրաժեշտ է օգտագործել բժշկի կամ դեղագետի հրահանգներին խիստ համապատասխան: Եթե համոզված չեք, թե ինչպես պետք է դեղն ընդունել, դիմեք բուժող բժշկին կամ դեղագետին:

Դեղահատն ընդունեք ջրի բավարար քանակով, առավոտյան՝ անկախ սննդի ընդունումից: Դեղահատը մի՛ կոտրեք և մի՛ ծամեք:

Էկմոր դեղով բուժման ընթացքում անհրաժեշտ է, որ բուժող բժիշկը կանոնավոր վերահսկի Ձեր վիճակը: Դա հատկապես անհրաժեշտ է բուժման սկզբում, դեղաչափը բարձրացնելիս և բուժումն ընդհատելիս:

Էմկոր դեղով բուժումը սովորաբար երկարատև է:

***Զարկերակային գերճնշում և ստենոկարդիա***

*Չափահաս պացիենտներ, այդ թվում՝ տարեցներ*

Դեղաչափն ընտրվում է անհատապես: Սովորաբար բիսոպրոլոլի օրական դեղաչափը 10 մգ է:

Կախված դեղի նկատմամբ Ձեր օրգանիզմի պատասխանից՝ բուժող բժիշկը կարող է որոշել նվազեցնել դեղաչափը մինչև 5 մգ կամ բարձրացնել՝ մինչև 20մգ: Դեղի օրական դեղաչափը չպետք է գերազանցի 20 մգ:

***Կայուն քրոնիկական սրտային անբավարարություն***

*Չափահաս պացիենտներ, այդ թվում՝ տարեցներ*

Բիսոպրոլոլով բուժումը պետք է սկսել ցածր դեղաչափով՝ այն աստիճանաբար բարձրացնելով:

Բուժող բժիշկը կորոշի, թե ինչպես բարձրացնել դեղաչափը: Սովորաբար դա կատարվում է հետևյալ կերպ.

- բիսոպրոլոլ 1,25 մգ, որն ընդունվում է օրական մեկ անգամ՝ մեկ շաբաթ տևողությամբ,
- բիսոպրոլոլ 2,5 մգ, որն ընդունվում է օրական մեկ անգամ՝ մեկ շաբաթ տևողությամբ,

- բիսոպրոլոլ 3,75 մգ, որն ընդունվում է օրական մեկ անգամ՝ մեկ շաբաթ տևողությամբ,
- բիսոպրոլոլ 5 մգ, որն ընդունվում է օրական մեկ անգամ՝ չորս շաբաթ տևողությամբ,
- բիսոպրոլոլ 7,5 մգ, որն ընդունվում է օրական մեկ անգամ՝ չորս շաբաթ տևողությամբ,
- բիսոպրոլոլ 10 մգ, որն ընդունվում է օրական մեկ անգամ՝ որպես պահպանող (շարունակական) բուժում:

Բիսոպրոլոլի թույլատրելի առավելագույն օրական դեղաչափը 10 մգ է:

Կախված դեղի տանելիությունից՝ բուժող բժիշկը կարող է նաև որոշել երկարացնել դեղաչափերի բարձրացումների միջև ընկած ժամանակահատվածները: Վիճակի վատթարացման կամ դեղի անտանելիության դեպքում հնարավոր է նորից դեղաչափի նվազեցման կամ բուժման ժամանակավոր դադարեցման կարիք լինի: Որոշ պացիենտների համար բիսոպրոլոլի պահպանող դեղաչափը կարող է լինել 10 մգ-ից պակաս: Բուժող բժիշկը կհայտնի, թե ինչ է պետք անել:

Բուժման ամբողջական դադարեցման դեպքում բժիշկը, որպես կանոն, խորհուրդ է տալիս դեղաչափն աստիճանաբար նվազեցնել, քանի որ հակառակ դեպքում Ձեր վիճակը կարող է վատթարանալ:

***Դեղի կիրառումը լյարդի կամ երիկամների ֆունկցիայի խանգարումներ ունեցող պացիենտների շրջանում***

Լյարդի կամ երիկամների ֆունկցիայի թեթև և չափավոր աստիճանի խանգարումներ ունեցող պացիենտների համար սովորաբար դեղաչափի ճշգրտում չի պահանջվում:

Երիկամների ֆունկցիայի ծանր աստիճանի խանգարումներ (կրեատինինի մաքրումը 20 մլ/րոպեից ցածր է) և լյարդի ֆունկցիայի ծանր աստիճանի խանգարումներ ունեցող պացիենտների համար խորհուրդ է տրվում բիսոպրոլոլի օրական դեղաչափը չգերազանցել 10 մգ-ից:

**Եթե գերազանցել եք դեղաչափը՝ ավելի շատ դեղահատ եք ընդունել, քան թույլատրելի է**

Եթե Էմկորի ավելի շատ դեղահատեր եք ընդունել, քան թույլատրելի է, ապա այդ մասին անհապաղ հայտնեք բուժող բժշկին: Ձեր բժիշկը կորոշի, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկել:

Գերդեղաչափման ախտանիշները կարող են ներառել սրտամկանի կծկման հաճախականության նվազում, շնչառության ծանի աստիճանի դժվարացում, գլխապտույտ կամ դող (պայմանավորված է արյան մեջ գլյուկոզայի ցածր պարունակությամբ):

**Եթե դուք մոռացել եք ընդունել Էմկոր դեղը**

Չի կարելի ընդունել կրկնակի դեղաչափ՝ բաց թողնվածը լրացնելու նպատակով: Հաջորդ առավոտյան ընդունեք նախատեսված դեղաչափը:

**Եթե դուք դադարեցնում եք Էմկոր դեղի ընդունումը**

Երբեք մի՛ դադարեցրեք Էմկոր դեղի ընդունումը՝ առանց բուժող բժշկի թույլտվության: Հակառակ դեպքում Ձեր վիճակը կարող է զգալիորեն վատթարանալ: Բուժումը չի կարելի կտրուկ ընդհատել, հատկապես սրտի իշեմիկ հիվանդություն ունեցող պացիենտների դեպքում: Եթե պլանավորում եք ընդհատել բուժումը, ապա բուժող բժիշկը, ամենայն հավանականությամբ, խորհուրդ կտա դեղաչափն աստիճանաբար նվազեցնել:

Եթե դեղի ընդունման հետ կապված լրացուցիչ հարցեր ունեք, խորհրդակցեք բուժող բժշկի կամ դեղագետի հետ:

## 4. ԻՆՉՊԻՍԻ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ

Ինչպես բոլոր դեղերը, Էմկոր դեղը նույնպես կարող է առաջացնել կողմնակի ազդեցություններ, թեև ոչ բոլոր պացիենտների մոտ դրանք կարող են դրսևորվել:

Լուրջ ռեակցիաները կանխելու համար անմիջապես դիմեք բժշկի, եթե կողմնակի ազդեցությունները ծանր բնույթ են կրում, հանկարծակիորեն ի հայտ են եկել կամ արագորեն բարդանում են: Առավել լուրջ կողմնակի ազդեցությունները վերաբերում են սրտի ֆունկցիային.

- սրտամկանի կծկման հաճախականության նվազեցում (կարող են առաջանալ ոչ ավելի քան 10 պացիենտից մեկի մոտ),
- սրտային անբավարարության բարդացում (կարող են առաջանալ ոչ ավելի քան 10 պացիենտից մեկի մոտ),
- սրտի դանդաղ կամ անկանոն զարկեր (կարող են առաջանալ ոչ ավելի քան 100 պացիենտից մեկի մոտ):

Եթե զգում եք գլխապտույտ, թուլություն կամ շնչառության դժվարացում, հնարավորինս շուտ դիմեք բուժող բժշկին:

Մյուս կողմնակի ազդեցությունները թվարկված են ստորև՝ ըստ հանդիպման հաճախականության:

**Հաճախ (կարող են առաջանալ ոչ ավելի քան 10 պացիենտից մեկի մոտ)**

- հոգնածություն, թուլության զգացողություն, գլխապտույտ, գլխացավ,
- ձեռքերում կամ ոտքերում սառնության կամ թմրածության զգացողություն,
- զարկերակային ցածր ճնշում,
- ստամոքսի կամ աղիների խանգարումներ, օրինակ՝ սրտխառնոց, փսխում, փորլուծություն կամ փորկապություն:

**Ոչ հաճախ (կարող են առաջանալ ոչ ավելի քան 100 պացիենտից մեկի մոտ)**

- քնի խանգարումներ,
- դեպրեսիա,
- գլխապտույտ՝ կանգնելիս,
- շնչառության խանգարումներ՝ բրոնխային ասթմա կամ թոքերի քրոնիկական հիվանդություններ ունեցող պացիենտների շրջանում,
- մկանային թուլություն, մկանային ջղակծկումներ:

**Հազվադեպ (կարող են առաջանալ ոչ ավելի քան 1000 պացիենտից մեկի մոտ)**

- լսողության խանգարումներ,
- ալերգիկ քթարտադրություն,
- արցունքագոյացման նվազում (չոր աչքեր),
- լյարդի բորբոքում, ինչը կարող է առաջացնել ակնագնդերի դեղնություն,
- արյան անալիզի՝ լյարդի ֆունկցիան կամ ճարպերի կոնցենտրացիան բնորոշող որոշ ցուցանիշների շեղում նորմայից,
- ալերգիկ տիպի ռեակցիաներ, օրինակ՝ քոր, հիպերեմիա, ցան,
- էրեկցիայի խանգարում,
- գիշերային մղձավանջներ, հալյուցինացիաներ,
- գիտակցության կորուստ:

**Շատ հազվադեպ (*կարող են առաջանալ ոչ ավելի քան 10000 պացիենտից մեկի մոտ*)**

- աչքերի բորբոքում կամ կարմրություն (կոնյունկտիվիտ),
- մազաթափություն,
- մաշկի թեփուկանման ցանի (պսորիազ) առաջացում կամ բարդացում, պսորիազանման ցան:

**Կասկածելի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ հաղորդում**

Կողմնակի ազդեցության ի հայտ գալու դեպքում այդ մասին տեղեկացրեք բժշկին կամ դեղագետին: Սա վերաբերում է նաև այս ներդիր-թերթիկում չնշված որևէ այլ կողմնակի ազդեցությանը: Դուք կարող եք կողմնակի ազդեցության մասին ուղղակիորեն առցանց հաղորդել ՀՀ ԱՆ ակադեմիկոս Է.Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն՝ հետևյալ հղումով. www.pharm.am կամ զանգահարել թեժ գիծ. հեռախոսահամարներ՝ (+374 10) 20 05 05 և (+374 96) 22 05 05:

Կողմնակի ազդեցության մասին կարելի է հաղորդել նաև դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջը՝ ԳՄ Ֆարմասյուտիքալս ՍՊԸ, Վրաստան, ք. Թբիլիսի, Ֆոնիչալա 65 հեռախոսահամար՝ +995 32 2404801/02:

Կողմնակի ազդեցությունների մասին հաղորդելով՝ դուք նպաստում եք այս դեղի անվտանգության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության ապահովմանը:

## 5. ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ ԷՄԿՈՐ ԴԵՂԸ

Դեղը պահեք 25$^{0}$C-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում:

Դեղը պահեք երեխաների համար անհասանելի և անտեսանելի տեղում:

Դեղի պիտանիության ժամկետը 3 տարի է:

**Մի՛ օգտագործեք դեղը տուփի վրա նշված պիտանիության ժամկետի ավարտից հետո:**

Դեղերը չի կարելի նետել կոյուղի կամ կենցաղային թափոնների մեջ: Չօգտագործված դեղերի հետ վարվելու մասին հարցրեք դեղագետին: Այս միջոցառումներն ուղղված են շրջակա միջավայրի պահպանությանը:

## 6. ԻՆՉ Է ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԷՄԿՈՐ ԴԵՂԻ ՓԱԹԵԹԸ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

**Ինչ է պարունակում Էմկոր դեղը**

Էմկոր 2,5 դեղի յուրաքանչյուր թաղանթապատ դեղահատը պարունակում է ակտիվ բաղադրատարր՝ բիսոպրոլոլի ֆումարատ - 2,5 մգ:

Էմկոր 5 դեղի յուրաքանչյուր թաղանթապատ դեղահատը պարունակում է ակտիվ բաղադրատարր՝ բիսոպրոլոլի ֆումարատ - 5 մգ:

Էմկոր 10 դեղի յուրաքանչյուր թաղանթապատ դեղահատը պարունակում է ակտիվ բաղադրատարր՝ բիսոպրոլոլի ֆումարատ - 10 մգ:

*Օժանդակ նյութեր.* ժելատինացված օսլա (Uni-pure DW-L), պոլիվինիլպիրրոլիդոն, ժելատինացված օսլա (Uni-pure WG 220), միկրոբյուրեղային ցելյուլոզա, կալցիումի հիդրոֆոսֆատ, սիլիցիումի երկօքսիդ, մագնեզիումի ստեարատ:

**Ինչ տեսք ունեն Էմկոր դեղի դեղահատերը և ինչ է պարունակում փաթեթը**

Դեղին, կլոր, երկուռուցիկ թաղանթապատ դեղահատ:

**Փաթեթի բնութագրիչներ**

Թաղանթապատ դեղահատեր (2,5 մգ, 5 մգ և 10 մգ):

1 բլիստերը պարունակում է 10 դեղահատ: 3 բլիստերները տեղադրված են ստվարաթղթե տուփի մեջ՝ ներդիր-թերթիկի հետ միասին:

**Դեղատնից բաց թողնելու կարգ**

Դեղատոմսով

**Արտադրող**

ԳՄ Ֆարմասյուտիքալս ՍՊԸ

Վրաստան, ք.Թբիլիսի, Ֆոնիչալա 65